

ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԱԶԳԱՅԻՆ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՔ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆՔ

ՅՈՎԱԵՓԱՅ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԱՐԴԱՌԹԵԱՆՑ.

ԿԱՆՈՆ ՔԱՀԱՆԱՅԻՑ ԵՒ ՍԱՐԿԱՒԱԳԱՅ ՀԱՍԻՑ ԵՒ ԻՐԱՒԱՆՑ

Բարեհաճութեամբ սահմանադրեալ ի Յովսեփայ Աբբազան Արքեպիսկոպոսէ, եւ յԱստուածաբեալ Առաջնորդէ, ի Հիմնադրէ Նոր Նախիջևանու ի 1787 թուոյ, փետրվարի 28-ին, ըստ խնդրոյ բոլորից եկեղեցականացն, երեւելի Իշխանաց, Հոգաբարձուաց, եւ Հասարակ բնակչաց քաղաքին: Իսկ արդիս՝ Նորին Բարձր Աբբազնութեանն հրամանաւ տպեալ, 1795 թուոյ, օգոստոսի 8:

Սրբոյ եւ Մեծի Արքեպիսկոպոսի Եջմիածնի Ծայրագոյն Նուիրակ, Ռուսաց երկրի Հայոց Առաջնորդ, եւ Նոր Նախիջևան քաղաքիս Հիմնադիր Յովսեփ Արքեպիսկոպոս, ըստ խնդրոյ եւ հաճութեան քաղաքիս Դատաւորաց, Հոգաբարձուաց, եւ երեւելի արանց, յատկացուցի գնասս եւ գիրաւունս Քահանայից, զորս ի կենդանեաց եւ ի մեռելոց ընդունին նորա, եւ գնոյն կանոնաւորեցի ի ներքոյ, որպէս զի յայսմնեւ մի լիցի տրտունջ ի մէջ քահանայից եւ ժողովրդեանն՝ վասն հոգեւորական հասից եւ իրաւանց. զի մի անվարձ մնացեն երկրքին կողմունքն, այլ իւրաքանչիւրքն զպարտաւորութիւնս իւրեանց ճանաչեսցեն. քահանայքն առանց տրտնջման զաստուածային շնորհն մատակարարեսցեն ժողովրդեան, եւ ժողովուրդքն առանց զրկանաց եւ տրտնջման՝ զսահմանեալ հասս եւ գիրաւունս տացեն քահանայից, որպէս Աստուծոյ պաշտօնէից: Որպէս զի երկրքին կողմունքն լիցին պարտաւոր ըլլալ բանաց՝ յաղագս զխաղաղութիւն ունելոյ լինքեանս:

Եւ զոր սահմանեմք եւ յատկացուցանեմք կանոնաւս այս եւ:

Նախ՝ Պսակղրամն քահանայից՝ առաջին դասքն ժողովրդեան՝ որք են ի վաճառականութիւն զրեցեալ, տացեն 4 ոռապլի: Երկրորդ դասքն՝ որք են արհեստաւորք, տացեն 2 ոռապլի: Իսկ երրորդ դասքն՝ որք են հասարակութիւն քաղաքիս, տացեն 1 ոռապլի: Իսկ աւագ սարկաւագին, առաջինքն՝ 50 կօպէկ, միջինքն 25 կօպէկ, իսկ յետինքն 10 կօպէկ:

Թագաւոր օրհնելոյ, առաջինքն՝ 2 ոռապլի, միջինքն՝ 1 ոռապլի, եւ յետինքն՝ 50 կօպէկ:

Երկրորդ՝ ի հարսանիսն, որպէս զոյ սովորութիւն ի մէջ Ղրիմու, որ հարսին՝ վասն ձեռք համբուրելոյ տան քարեկամքն գնուէր ինչ, նոցին տասանորդն՝ ըստ սովորութեանն տացեն:

Երրորդ՝ վասն ապուսանիսն՝ ով ոք տանի, նորին քահանային ի կողմանէ աղջկան տան անպակաս 1 ոռապլի:

Չորրորդ՝ նշանին՝ երկուց կողմանց՝ իւրաքանչիւր ոք իւր քահանային, առաջինքն տան 1 ոռապլի, 50 կօպէկ՝ միջինքն 1 ոռապլի. հասարակքն 50 կօպէկ: Մի լիցի յայսրմնեւ սուրբ Խաչ եւ Աստուարան շրջեցուցանել ի մէջ ժողովրդեան. այլ զկնի օրհնութեան նշանին՝ տանուտէրն միայն համբուրէ, եւ իւր նուէրն տայ. այլքն որք հրաւիրեալք են՝ չունին պարտաւորութիւն տալոյ ինչ:

Հինգերորդ՝ զրկվածքին եւս երկաքանչիւր կողմն՝ իւր քահանային տան, առաջինքն 1 ոռապլի, 50 կօպէկ. միջինքն 1 ոռապլի, յետինքն 50 կօպէկ հանդերձ խաչհամբուրէքիւն:

Վեցերորդ՝ ննջեցելոց քաղման, եւ եօրն ամբիժքին, առաջինքն տացեն 3 ոռապլի, միջինքն 2 ոռապլի, իսկ հասարակքն, որք են երրորդ դասքն, 50 կօպէկ: Եւ վասն կողոպուտի՝ եթէ չկամիցին գնանդերձսն մեռելոյ քահանային տալ, վասն այնմ եւս տացեն 3 ոռապլի առաջինքն, 2 ոռապլի միջինքն, եւ 1 ոռապլի յետինքն: Իսկ սարկաւագին՝ 50 կօպէկ, 25 կօպէկ, եւ 10 կօպէկ: Բայց երախայքն՝ որք ի տասն տարւոյն ի վայր լինին ննջեցեալ, այսինքն պակաս քան զտասն տարին, նոցին աղագաւ առաջինքն տան 1 ոռապլի, 50 կօպէկ. միջինքն 1 ոռապլի, յետինքն 30 կօպէկ՝ առանց կողոպուտի: Այլքն մեծի կարգին են:

Իսկ վասն Կնքաղրամին՝ ոչ իշխեցաք անգին շնորհին Աստուծոյ զին զնել. այլ որ ինչ ի սրտէ ժողովրդեանն ըլխեսցէ եւ տացեն, քահանայքն սիրով ընկալցին իբրեւ գնուէր եկեղեցոյ. եւ որք աղքատքն իցեն՝ մի բռնադատեսցեն. եւ ժողովուրդքն մի հատցեն գնուէրս քահանայիցն, զի սպասաւորք են իւրեանց ի բարիս: Եւ քահանայք մի իշխեսցեն գնալ ընդ մկրտութեան՝ առանց հրաւիրման. այլ իւր մկրտող քահանայն միայն. իսկ եթէ կնքաւորն հրաւիրեսցէ, որքան եւ կամեսցի այնքան քահանայք գնացեն:

երէ օրն լաւ իցէ, ի յեկեղեցւոյն երգով տարցեն զմկրտեալն . իսկ երէ ցուրտ իցէ, կամ անձրեւ, եւ կամ ցելս, շուրջառն առեալ եւ զնացեալ ի դուռն մկրտելոյն՝ անդ սկիզբն արացեն երգոյն :

Սոյնպէս եւ վասն Ժամուցին, Տնօրհներին, Գերեզմանօրհներին եւ Քառասունքին ոչ իշխեցաք զին կտրել եւ յատկացուցանել . այլ որ ինչ ի սրտե ժողովրդեանն բողոքեսցէ՝ զայն տալ ի փառս Աստուծոյ : Եւ երէ ոք աւելի քան զգրեցեալս մեր տայցէ, իշխանութիւն ունի, եւ բարի առնէ . բայց մի երբեք պակասեցուցէ զյատկացուցեալսն :

Եւ քահանայք՝ զոր ինչ ի վերն վասն սարկաւազաց գրեցի, զայնս պարտին յամենայն օրինակատարութեանց առնուի :


Իսկ եկեղեցւոյն տացեն մկրտեալքն առ հասարակ 10 կօպէկ . որք աղքատքն իցեն՝ ոչինչ :

Եւ վասն հարսանեաց՝ առաջինքն տացեն եկեղեցւոյն 50 կօպէկ, միջինքն 25 կօպէկ, յետինքն 10 կօպէկ :

Այս օրէն յաւիտեանս կացցէ վասն քահանայից, որոյ հաստատութեան աղագար ստորագրեմ ահա ի ներքոյ՝ Դատաւորք եւ Հոգարարձու երեւելի արամբք քաղաքիս, եւ սովորական Մեծ Կնքովս իմով կնքեմ .

ՌՈՒՍԱՏ ԵՐԿԻՐ ՀԱՅՈՑ ԱԶԳԻՍ ԱՌԱՋՆՈՐԴ

ՅՈՎՍԷՓ ԱՐԲ ԵՊԻՍԿՈՊՈՍ :



Առաջին դատաւոր Մայեօր Իվան Արբանաժով .

Երկրորդ դատաւոր Մկրտիչ Պետրոսեան .

Երկրորդ դատաւոր Բրաբուհիկ Պավել Արբենով .

Երկրորդ դատաւոր Յակօր Եղիայ Կիւզեկեան .

Մարբին Իվանով .

Մահտեսի Եղիազար Պապասինով .

Մահտեսի Դանիէլ Խօճայեան .

Գասպար Տէր Մարտիրոսեան .

Մահտեսի Ծերուն .

Դրագիր Ստեփան Փեհլիվանով .

Մահտեսի Աստուածատուր Ղազարով .

Ստեփան Տէր Ոսկանով .

Սօրնիկ Ստեփան Գրիգորով .

Վարդան Պապիով .

Մարգար Սահակով .

Գասպար Փանոսեան Սահարճր օղլու .

Մահտեսի Խաչերես Մահտեսի Պողոսեան .

Մանուկ Սահակով .

Մահտեսի Միքայէլ Առաքելով .

Տիրացու Խաչօ Մահտեսի Սարգիսով .

Յակօր Սեֆերեան :

ԳԱՇՆԱԴՐՈՒԹԻՒՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ

Բնակչաց նորոյն Նախիջեւանու, ի յԱստիճանաւոր եւ ի Վաճառական անձանց յատկացեալ՝ քսան եւ չորս Հոգարարձուաց, Գլավային, եւ հինգ Գատաւորացն Մագիստրարին . զոր հաճութեամբ եւ հաւանութեամբ ստորագրեալ հաստատեցին ի 1795 թուոյ մայիսի 26-ին ,

Ի ներկայութեան, Հիմնադրին Նոր Նախիջեւանու՝ Տեառն Յովսեփայ Պասկազգեաց Սրբազան Արքեպիսկոպոսին, եւ Աստուածարեալ Առաջնորդին :

Որոյ հրամանաւն տպեցաւ **1795** թուոյ, օգոստոսի **8** :

Անուամբն Աստուծոյ, մեք ներքոյ ստորագրողքս, հաճութեամբ նորին Բարձր Սրբազնութեան Հովուապետին մերոյ եւ Հօր, Տեառն Յովսեփայ Արքեպիսկոպոսին, յօժար կամօք յանձն առաք լինիլ Հոգարարձու Նախիջեւանու Քաղաքիս մերոյ, Աստիճանաւորք եւ Վաճառականք, քսան եւ չորս անձինք, Գլավային քաղաքիս, եւ հինգ Գատաւորք Մագիստրարին, այսոս պայմանաւ՝ զոր ի ներքոյ բացայայտեմ .

Նախ՝ լինիլ մեզ ամենիցս միաշունչ եւ միահոգի իմիասին, եւ միով խորհրդով աշխատիլ եւ հետեւիլ բարեկարգութեան քաղաքիս՝ որպէս հայր զբաժնի վերայ զաւակացն, հաւատարմութեամբ եւ առանց անձնական փառքի կամապաշտութեան եւ աջառութեան :

Երկրորդ՝ համայն հոգարարձուքս եւ դատաւորքս՝ ընդ զլավային, եղիցուք առ միմեանս սիրով եւ խաղաղութեամբ, որպէս վայել է պատուելի անձանց եւ եղբայրութեան մերոյ : Հեռացուցուք ի միջոյ մերմէ զհեռ, զնախանձ եւ զատելութիւն, առ որ ոչ հաճի Աստուած . այլ պահեսցուք զհամաձայնութիւն համակամութեան, որում Աստուած լինի օգնական, վասն արդիւնարարութեան նորաշէն քաղաքիս մերոյ :

Երրորդ՝ անհետ արացուք զամենայն անցսն որ փոքր մի յառաջ նսեմացոյց զպայծառութիւն քաղաքիս . ի բաց վարեցուք այսոսհետեւ զգոհեցական ամբօխն եւ զժողովս նոցա . եւ մի երբեք կցորդք եղիցուք խառնակիչ եւ պղտորիչ անձանց . այլ ազնուական հոգով՝ բարեկարգութեան քաղաքիս հետեւեցուք, որ ժողովք եւ ամենայն զործք մեր մի լիցի ի քամահանս մեզ, այլ ի փառաւորութիւն :

Զորքորդ՝ միաբան ուխտեմք հնազանդիլ Աստուծոյ եւ օրինաց նորա : Ամենողորմ Թագուհւոյն մերոյ լինիլ ամենահպատակ ծառայք, եւ հնազանդ փրկարար օրինաց նորա : Եւս եւ կանոնաց սուրբ եկեղեցւոյ մերոյ, եւ Հոգեւոր Հօրն մերոյ՝ երախտաւոր Հովուապետին, որպէս զլսաւոր անդամոյ եւ Կառավարչի մերս հասարակ եղբայրութեան, եւ Հաստողի զմիաբանութիւնս մեր : Միաբան հակառակ կացցուք հակառակողացն օրինաց մերոց եւ կանոնաց, զորս ունիմք յԱստուծոյ եւ ի Սրբազան Հօրեւ մերմէ եղեալ համաձայնութեամբ հասարակութեան մերոյ : Եւ լիցուք առ հասարակ խնամակալ Վանիցն մերոց եւ եկեղեցեաց, որպէս մեք՝ նոյնպէս եւ որդիք մեր յաւիտեանս ժամանակաց :

Հինգերորդ՝ ի սահմանելն մեր զիրաւունս քաղաքիս, եւ ի կարգաւորելն զմուտս եւ գլխս հասարակութեան, ուխտեմք առաջի Աստուծոյ, առանց ակտի երեսպաշտութեան եւ կողմնապահութեան մտանել ի զործ եւ վճռել : Իսկ եւրքե միաբանութիւն մեր ի յերկուս ձեռքեցի ի վերայ դատողութեան ինչ, զերկուց կողմանց դատողութիւնս յայտնեցուք Սրբազան Հօրն մերոյ, որ զարդարն եւ զճշմարիտն ընտրեալ հաստատեցեք : Իսկ երէ նորին Սրբազանութիւն ի քաղաքիս ոչ լինիցի, միաբանութիւնն մեր՝ որ կողմն շատութիւն եւ ճշմարտութիւն ունիցի՝ զայն պահեսցեք ըստ իրաւանց. բայց մի լիցի անձնահաճութիւն եւ ընդվայր հակառակութիւն ի մեջ եղբայրութեան մերոյ :

Վեցերորդ՝ զգետինն զոր յատկացուցուք վասն քաղաքիս անասնոց խոտաճարակութեան, եւ կամ սակս ձիոց, մի երբեք բռնութեամբ եւ ազանութեամբ՝ ընդդէմ պայմանի մերոյ՝ խանգարեսցուք վար եւ ցան առնելով ի նմա. այլ զայն բողջուք յաղազս հասարակացն դիւրութեան. իսկ վար եւ ցանքն յատուկ լիցի : Եւ ում տուեալ լինի գետին վասն խոտոր շինելոյ՝ զգուշացուք ի վնասելոյ զնա :

Եօթներորդ՝ մի ոք իշխեսցեք ինքնազուլս ի մեր գետնիցն այլոց տալ՝ վասն զխոտ հնձելոյ, եւ կամ ցանք առնելոյ, որպիսի ոք եւ իցեք, յորմէ եւ ոք խնդրեսցեք. որ տալն եւ չտալն միաբանութեամբ լիցի, զի մի խռովութիւն եւ կամ ատելութիւն ծնցի անտի՝ սակս անձնահաճութեան ումանց. եւ խնդրողին բաւականութիւնն ի հասարակութենէն լիցի, եւ ոչ ի յատուկ մասնաւոր անձանց :

Ութերորդ՝ ըստ հաճութեան Սրբազան Հօրն մերոյ՝ արացուք Դպրոց գտունն՝ որ վասն Յովսէփ Անդրէիչին շինեցեալ, մինչեւ նորին Սրբութեան կառուցանելն զդպրոցըն զոր ունի մեզ յառաջադրեալ. եւ ի նոյն փոքրիկ դպրոցի երկու վարպետք լիցին, եւ կամ ուսուցիչք, հայերէն եւ ռուսերէն, որք ուսուցեն մանկանց մերոց՝ որպէս ըզկարդալ, նոյնպէս զգրել երկուց լեզուաց : Հայերէնի վարձըն տարեկան՝ Սրբազան Հայրն մեր ունի հատուցանել ի յեկեղեցեացն. իսկ ռուսերէն վարպետին պարտապան եմք մեք հատուցանել. եւ ըստ հրամանի Սրբազան Հօրն մերոյ՝ առ հասարակ որքան հոգաձու լինիլ դպրոցին, նոյնքան՝ եւ ողորմելի աղքատաց քաղաքիս հոգացողութեան՝ այժմ եւ յապայն. որպէս յառաջագոյն բարեկարգութեամբ սահ-

մանեալ եւ Սրբազան Հայրն մեր՝ հաճութեամբ հասարակացս, եւ վասն այնմ՝ զյատուկ տէֆթերս կարգեալ ունի ի միջի մերում, զնոյնն պարտաւորիմք ի յօգուտ եւ ի դիւրութիւն հասարակ աղքատաց քաղաքիս մերոյ՝ անփոփոխ պահել միակամութեամբ, եւ զպարտաւորութիւնս մեր կատարել, ըստ հրամանի Սրբազան Հօրն մերոյ :

Իններորդ՝ առ հասարակ միաբանութեամբ ջանասցուք ի կարգի եւ ի կանոնի պահել զՄագիստրաթն մեր եւ զպատիւ նորա, ըստ Բարձրագոյն ողորմութեան եւ Հրամանի Ամենողորմ Թագուհւոյն մերոյ, որ ի Պրիմէիէլին մեր : Մի նուազեցուցուք զպատիւ Դատաւորացն եւ Գլավային, եւ մի յափշտակեսցուք զպարտաւորութիւնս նոցա, եւ ի սրտե հետեւեսցուք եւ ջանասցուք՝ զհարեկարգ Ողորմութիւնն Ողորմած Կայսերուհւոյն մերոյ՝ զորս յատկացուցեալ ունի ի Պրիմէիէլին՝ զամենայն հաստատ պահել, եւ ի վերայ նորա զկենանս մեր զոհել :

Տասներորդ՝ երէ Սրբազան Առաջնորդն մեր ոչ լինիցի ի քաղաքիս, եւ մեք զմեծ խորհուրդ ինչ ունիցիմք սակս հոգեւոր զործոց, պարտաւորիմք յայնժամ զՅաջորդն նորա զԲարձր Արժանապատիւ Կարապետ Վարդապետն, եւ կամ ով ոք Յաջորդ գտցի, ի խորհուրդ մեր կոչել, եւ համաձայնութեամբ աւարտել զխորհուրդ մեր. որ երբեք նիւթ խռովութեան ի մեջ հոգեւոր եւ մարմնաւոր կառավարութեանց ոչ ծնցի. որպէս մինչեւ ցարդ եղեւ ի զանազան ծածուկ տեղիս :

Մետասաներորդ՝ օր ժողովելոյ մերոյ ի խորհրդարանն՝ եղիցի շարաքն, յորում աւուր առ հասարակ ժողովիցիմք անդ՝ ի յուր ժամէն մինչեւ տասն եւ երկու ժամն, ընդ Գլավային եւ ընդ Դատաւորացն, խորհնեսցուք վասն ամենայնի շահաւետութեան եւ արդիւնաւորութեան քաղաքիս, եւ հասարակ միաբան եղբայրութեան մերոյ : Որք ոչ իցեն ներկայ, երէ հարկաւոր բան ինչ լինիցի, ծանուցուք նոցա. բայց ով ոք ի քաղաքիս լինիցի, երէ ոչ ունի զնիւանդութիւն եւ կամ զզխաւոր հարկաւորութիւն, պարտի յամենայն շարաքի՝ ի նշանակեալ ժամուն զալ ի խորհրդարանն, յաղազս հասարակացն բարութեան : Երէ ծուլանայ ոք, յետ երկիցս եւ երկիցս խրատելոյն արտաքսեսցի ի միաբան եղբայրութենէն, եւ ի տեղի նորա այլ ոք հաւատարիմ ընտրեսցի :

Երկուտասաներորդ՝ երէ ոք ի միաբան եղբայրութենէն մերմէ հակառակեսցի վերոգրեալ ուխտիցն մերոց եւ պայմանաց, եւ այլայլել կամեսցի զբարեկարգութիւնս մեր, այնպիսին՝ յետ քանիցս մեղմութեամբ խրատելոյն արտաքսեսցի ի հասարակ միաբան եղբայրութենէ մերմէ, որպէս խանգարիչ եւ պղտորիչ քաղաքիս, ի յոր աստիճանէ եւ իցեք, եւ համարեսցի նա ըստ վճռական բանի Յիսուսի Քրիստոսի Փրկչին մերոյ՝ իրրեւ զհեքանոս եւ զմաքսաւոր :

Եւ երեքտասաներորդ՝ զսոյն բարեկարգութիւնս յայտնեալ հասարակութեան քաղաքիս, եւ ընդունելութեամբ նոցա՝ խնդրեցաք ի Սրբազան Հօրն տպեցուցանել յաղա-

զըս ավագային, զի ամենեքեան ծանիցեն զկարգադրութիւն քաղաքիս մերոյ. բնա է: Գրեցաւ 1795 թուոյ, մայիսի 26-ին:

Հոգարարձուք Աստիճանաւորք.

Պօտպօլկովնիկ ի Կառալէր Իվան Աբրահամով.
Կապիտան Աստուածատուր Ղազարով.
Կապիտան Ստեփան Զալըղուշով.
Պառուգիկ Մկրտիչ Պետրոսով.
Պառուգիկ Ստեփան Պօպով.
Պառուգիկ Դանիէլ Խարախաշով.
Պօտպառուգիկ Յակոբ Կիւզէիով.

Գրախոյն եւ Դատաւորքն.

Գլավայ Միքայէլ Գեօղրէտով.
Առաջին Դատաւոր Դանիէլ Խօջայեան.
Երկրորդ Դատաւոր Մանուէլ Շահինարով.
Երկրորդ Դատաւոր Մանտեի Եղիազար Պապասինով.
Երկրորդ Դատաւոր Ստեփան Փալէվանով.
Երկրորդ Դատաւոր Թօմաս Խօջայով.

Հոգարարձուք Վաճառականք.

Պարոն Յարութիւն Տէր Մկրտչի.
Պարոն Գասպար Տէր Մարտիրոսի.
Պարոն Կարապետ Ղազազ.
Մանտեի Միքայէլ Առաքելօղլու.
Մանտեի Աւագ Մարտիրոսեան:
Պարոն Գասպար Սահարճիօղլու.
Երկրորդ Կիւտի Մանտեի Խաչերես Մանտեի Պօղոսեան.
Կռածտանին Մանտեի Նազարէր Աղխաշով.
Մանտեի Յարութիւն Պալիով Խաբրանեան.
Յօհաննէս Գեօղրէտով.
Յովակիմ Մելքօնով.
Պարոն Գեորգ Թօրոսով.
Մանուէլ Սահակով.
Մանտեի Յարութիւն Սարգսեան.
Պարոն Շահին Պարոնով.
Պարոն Յօհաննէս Դրագոն.
Պարոն Կարապետ Նաղաշ.

Ստորեւ գրեցեալքն են հասարակութիւն քաղաքիս, որոց միակամ հաշանութեամբ եղեւ բարեկարգութիւնս այս սահմանեալ, կանոնաւորեալ եւ հաստատեալ.

Բրարուշիկ Լուսեղէն Սուլբանշահով.
Գեորգ Շահինարով.
Կարապետ Միրզով.
Մանտեի Գեորգ Աղխաշով.
Կիւմիշլիս օղլու Փանոս.
Մանուէլ Կոստանով.
Խաչիկ Միրիճանով.
Արաքայ Մանուկով.
Գասպար Մարգարով.
Բիւրճիս Ղազար Յակօրով.
Մանտեի Պետրոս Պապասինով.
Յօհան Առաքելով Էքմէկճի.
Միքայէլ Սարգիսով.
Նահապետ Տէր Առաքելեան.
Գարրիկ Շահինարով.
Յարութիւն Յակօրով.
Պապի Յովակիմով.
Լուսեղէն Նազարէրով.
Գեորգ Գասպարով.
Յօհաննէս Մանուկով.
Վարպետգլուխ Միքայէլ Գրիգորով.
Վարպետգլուխ Խաչերես Պետրոսով.
Վարպետգլուխ Պապի Կարապետով.
Վարպետգլուխ Կարապետ Սարգիսով.
Վարպետգլուխ Միխիբար Խաչերեսով.
Վարպետգլուխ Պօղոս Աստուածատուրով.
Վարպետգլուխ Սիմաօն Լուսեղէնով Մնկրօղլու.
Թերզի Պապի Կարապետով.
Տապալի Գեորգ Գասպարով.
Լուսեղէն Գալուստով.
Խաչերես Ալտինով.
Յօհաննէս Մարգարով.
Յարութիւն Խաչերեսով.
Մարգար Տէր Պետրոսով.
Յօհաննէս Շահրազով:

ՀԱՆՆԵԼՈՒԿ.

Բան մը ունիմ շատ հարկաւոր,
Շարքն ու կարգը կանոնաւոր,
Բայց եւ անկարգ շատ կողմանէ
Զարմանալի աշխարհը մըն է. —

Ծառան կերթայ, տէրն ետեւէն,
Գարունն առաջ, ձրմեռն ետքէն,
Զաւակը վեր, ծընողքը վար,
Յիսնակն առաջ քան զվարդավառ:

Յուլիսի Հանելուկն է ձՐԱԳ.

Վերադիտող ամսագրոյս, ԳԱՅՐ. Վ. ԱՅՎԱԶԵԱՆ.

ՀՐԱՄԱՆԱԻ ԳՐԱԳՆՆՈՒԹԵԱՆ. ի Թեոդոսիա, ի 26 Յուլիսի 1865.

Ի Տպարանի Խալիպեան Ոստանարանի ազգիս Հայոց.

